

ԲԱՐԵՊԱՇՏԸ ԼԵՁՈՒՆ ԿՐՆԱՅ ԶՍՊԵԼ

1.- Ան որ գիտէ իր խօսքը կշռել՝ կատարեալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող (Յակոբոս 3:2):

2.- Ով որ ինքզինք բարեպաշտ կը սեպէ, սակայն իր լեզուին սանձ չի դնէր, անիկա ինքզինք կը խաբէ, որովհետեւ անօգուտ է իր բարեպաշտութիւնը (Յակոբոս 1:26):

3.- Որեւէ տգեղ խօսք չելլէ ձեր բերանէն: Խօսեցէ՛ք միայն ինչ, որ պէտք է ինչ, որ բարի է՝ ուրիշներուն հատաքը ամրապնդելու համար, որպէսզի լսողները Աստուծոյ շնորհքովը լեցուին (Եփեսացիս 4:29):

4.- Շատ խօսքերուն մէջ յանցանք պակաս չէ, բայց իր շրթունքները զսպողը խելացի է (Առակաց 10:19,20):

5.- Ո՛վ Տէր, պահպան դի՛ր իմ բերանիս, ու իմ շրթունքներուն դուռը պահպանէ՛ (Սաղմոս 141:3):

6.- «Ով որ կ'ուզէ կեանքը սիրել եւ բարի օրեր տեսնել, թող իր լեզուն պահէ եւ չարութիւն չխօսի, թող իր շրթները փակէ եւ նենգութիւն չխորհի, թող չարէն հեռանայ եւ բարիք գործէ, թող խաղաղութիւն կամենայ եւ զայն հետապնդէ:

Որովհետեւ Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն եւ ականջները պատրաստ են անոնց աղօթքները լսելու (Ա. Պետրոսի 3:10-12):

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, Երեքշաբթի, 30 Ապրիլ 2019-էն սկսեալ եւ ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց Եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Սուրբ պատարագի ընթացքին, հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս: Այս սուրբ պատարագին նպատակն է առիթ տալ մեր այն հայորդիներուն, որոնք Կիրակիի կողքին, շաբթուան ընթացքին եւս կը փափաքին Հայ Եկեղեցոյ հոգեւոր սնունդը ստանալ: Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները իրենց ամենօրեայ հեւքին մէջ պահ մը կանգ առնելու եւ աղօթքով Աստուծոյ ու իրարու հետ ըլլալու:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ԺԲ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 21 ՅՈՒՆԻՍ 2019 ԹԻՒ 29

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԸՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 3.1-11: Հն. 11.13-24:
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 14.13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամառի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, զբաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամառի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է: Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու»:

Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան: Դուք տուէք անոնց ուտելիքը»:
Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»:

Յիսուս ըսաւ. «Հոս բերէք աստոնք»:
Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները արեւցած կտորները հաւաքելով տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ ԿԸ ՓՈՒԽԷ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

Կը պատմուի, թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձեալ կու գայ եւ ինքզինք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտեզի մը մէջ նստած, երբ Սուրբ Գիրք կը կարդար, Ամբրիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դու՛ն, ո՛վ Ափրիկեցի, դո՞ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ Ափրիկեցիին կը պատասխանէ ըսելով. «Եթէ Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ նաշա եղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կրնայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Ատիկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԳԻՐՔԸՆ
3.1-11

Ահաւասիկ, Երկնաւոր Զօրքերու Տէրը Հրէաստանն ու Երուսաղէմը պիտի գրկէ իրենց գօրութիւնը եղող նեցուկներէն, հացի եւ ջուրի ամբողջ պաշարէն:

Այ պիտի չունենան ո՛չ յաղթ կտրիւն ու պատերազմիկ, ո՛չ դատաւոր ու մարգարէ, ո՛չ գուշակ եւ երէց, ո՛չ յիսնապետ ու հիանալի խորհրդատու, ո՛չ իմաստուն նարտարպետ եւ ո՛չ ալ նարպիկ կախարհ:

Դեռահաս պատանիներ իշխան պիտի կարգեմ անոնց վրայ եւ Բնահանոյժը պիտի ըլլայ անոնց իշխողը:

Մարդիկ իրարու պիտի իյնան, ընկերն իր ընկերոջ պիտի կեղեքէ, երիտասարդը արհամարհանով պիտի ընդդիմախօսէ ծերին եւ գոնիկը՝ ազնուականին:

Այն ատեն ամէն մէկը իր եղբայրը կամ հօրը ընտանիքին մէկ անդամը պիտի բռնէ եւ ըսէ. «Դուն պատմունան ունիս, եկուր մեր իշխանը եղիր եւ մեր ուսելիքը դուն հայթայթէ»:

Իսկ անիկա պիտի պատասխանէ. «Ես ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ ուսելիք ունիմ տունս, ո՛չ հագուելիք: Այս ժողովուրդին իշխան չեմ ըլլար»:

Երուսաղէմը լճուեցաւ եւ Հրէաստանը կործանեցաւ, որովհետեւ իրենց բնակիչները անօրէնութիւն խօսեցան եւ Տիրոջ հակառակ գործեցին:

Ուստի իրենց փառքը նսեմացաւ, իրենց երեսէն ամօթը վերցուեցաւ: Սողոմագիներուն պէս իրենց մեղքերով պարծեցան, առանց ծածկելու: Վա՛յ իրենց իրենք իրենց գլխուն չարիք բերին:

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
11.13-24

Ձեզի՛ հեթանոսներուդ կ'ըսեմ. հեթանոսներու առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծենամ մտածելով, որ թերեւս այս ձեռով ազգակիցներուս նախանձր գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ոմանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած զանոնք մերժեց որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ կը նշանակէ, թէ երբ վերստին ընդունի զանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:

Թէ Աստուած վերստին պիտի ընդունի զանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է կը նշանակէ, թէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է: Նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ նուիրուած են կը նշանակէ, թէ միւրեքն ալ Աստուծոյ նուիրուած են: Ճիշդ է, որ այդ միւրեքն ոմանք կտրուեցան եւ դուն, որ վայրի ձիւթնի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ձիւթնիին արմատներէն եկող հարուստ աւիշը ըմպեցիր: Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեիր կտրած միւրեքը: Մի՛ մոռնար, որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրայ: Հիմա պիտի ըսես. «Աստուած այդ միւրեքը կտրեց զիս պատուաստելու համար»: Իրաւ է: Անոնք՝ հրեաները կտրուեցան, որովհետեւ չհաւատացին եւ դուն՝ հեթանոսը, հաւատալուդ համար արմատին վրայ հաստատուեցար, բայց մի՛ հպարտանար, այլ՝ վախցիր:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒՄՏԱՇՈՒՆՉԷՆ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՉԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵ

Զաքարիա անունը թարգմանաբար կը նշանակէ՝ «Ան, որուն կը յիշէ Տէրը» եւ կամ «Տէրը կը յիշէ»: Այս անունով Հին Կտակարանին մէջ յիշուած են անլի քան քսան անհատ: Սակայն Զաքարիա մարգարէի անունը կը յիշատակուի Անգէի անուան կողմին, որպէս Տանարի վերակառուցման գործի ջատագով: Ան իր մարգարէական առաքելութիւնը իրականացուցած է Դարեհի տիրապետութեան երկրորդ տարին, մեր թուարկութենէն առաջ 520-516 թուականներուն միջեւ: Տանարը սկսած էր վերակառուցուիլ, երբ ան կը յայտարարէ իր առաջին մարգարէութիւնը, ապա երկրորդը եւ երրորդը: Մարգարէն իր աստուածային կանխասացութիւններով քաջալեր կը հանդիսանայ ժողովուրդին, կը մխիթարէ զանոնք աստուածային առատ օրհնութիւններով եւ սրբարանի վերականգման յոյսով, ինչպէս նաեւ կը յիշեցնէ անոնց ընտրեալ ժողովուրդ ըլլալու հանգամանքը:

Զաքարիայի մարգարէութիւնը, որ տասնմէկերորդն է Հին Կտակարանի մարգարէութիւններու ժողովածուններու շարքին, կ'ընդգրկէ տասնչորս գլուխ եւ կը բաժնուի երկու մասի: Առաջին մասը կը բովանդակէ ութ տեսիլներ, որոնք իրականութեան մէջ երկնային պատասխաններ են երկրին ու այդ ժամանակաշրջանը յուզող հարցերուն: Այս տեսիլներէն ետք, Աստուած խորհրդանշական գործողութեամբ մը Զաքարիային ցոյց կու տայ, որ մարգարէական բոլոր հեռանկարները կը տանին դէպի Մեսիային յայտնութիւնը: Ապա, յաջորդ մասին մէջ կը բացայայտուի Մեսիային երկրորդ փառաւոր գալուստը եւ Անոր ընկալումը երբայցի ժողովուրդին կողմէ:

Ընտրեալ ժողովուրդի մնացորդացը դարձի կու գայ եւ կը մաքրագործուի: Կը հաստատուի Աստուծոյ թագաւորութիւնը, թշնամի ժողովուրդները ահեղ դատաստանի կ'ենթարկուին եւ Երուսաղէմը կը դառնայ ազգերու հոգեւոր կեանքի կեդրոնը:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՄԻՄԱՆ
ՔԱՇԻՆ

Ո՞Վ Է ՊԱՏԱՐԱԳԻ
ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՍՏԱՏՈՂԸ

Ցիսուս Գրիստոս՝ իր մատուցեալ երեկոյին: Երբ վերնատունը իր աշակերտներուն հետ սեղան նստած էին, Հին Ուխտի Զատիկը կատարելէ ետք, Նոր Ուխտի Զատիկը հաստատեց Հացը առնելով ըսաւ. «Առէ՛ք, կերէ՛ք, ասիկա իմ մարմինս է» (Մտ 26.26), ապա բաժակը առաւ ու ըսաւ. «Ամէնքդ ալ խմեցէ՛ք ասկէ, ասիկա իմ Նոր Ուխտիս արիւնն է» (Մտ 26.28) եւ զայն Առաքեալներուն հաղորդելով պատուիրեց միշտ կատարել հաղորդութեան խորհուրդը, ըսելով. «Այս մէկը կատարեցէ՛ք իմ յիշատակիս համար» (Ա. կրթ.11.24):

ԵԹԷ ՅՈՒՍԱՀԱՏ ԷՔ, ԱՂՕԹՔԸ
ՉԵՁ ԿԸ ՉՕՐԱՑՆԷ

- 1.- Իրիկունը լաց կայ, բայց առտուն՝ ուրախութիւն: (Մղ.30.5)
- 2.- Տէրը մօտ է անոնց, որոնց սիրտը կտրած է ու հոգիով խոնարհածները կ'ապրեցնէ: (Մղ.34.18)
- 3.- Սպասելով սպասեցի Տիրոջը, որ ծոցեալ ինձի ու յսեց իմ աղաղակս եւ գիս կորստեան փոսէն, տղմալից կաւէն հանեց ու ոտքերս վէմի վրայ ամրացուց ու փալտածքս հաստատեց: (Մղ. 40.2-3)
- 4.- Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս եւ ինչո՞ւ իմ ներսիդիս ես: Աստուծոյ յուսայ, վասնզի անգամ մըն ալ գանիկա պիտի գովեմ: Ան է իմ երեսիս փոկութիւնը ու իմ Աստուածս: